

23. 15-8



Հ. Յ. ԳԱՆՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՎԱՒԵՐԱՅԻԱԾ V ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԷՆ

ԱՐՏԱՏՊԻԱԾ

ՀԱՅԱՆՈՒԹՆԱԿԱՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԲԻՕԹ

1907 415 576 2/2 1/2
1/2 1/2 1/2 1/2

Հրատ.

1915

Հ. Յ. ԳԱՆՆԱԿՑՈՒԹՆԱՆ

ՊՕՍԹԸՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարդկութեան յառաջդիմութիւնը—որ հետըզհետէ կազատէ մարդս բնութեան ուժերու հպատակութենէն եւ անոր հլու սպասաւորը կղարձնէ երբեմնի աստուածները—չի կրնար կատարեալ նկատուիլ, ցորչալի մարդկային մտքի եւ աշխատանքի նըլաճումները հաւասարապէս չեն ծառայեր հասարակութեան բոլոր անդամներուն բարօրութեանը :

Բոլոր հասարակութիւններու մէջ՝ դեռ անյիշատակ ժամանակներէ ի վեր՝ մենք կտեսնենք դասակարգային բաժանումներ — իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքուողներ :

Հասարակութիւնը ամէն տեղ վերածւած է երկու անհաւասար հաստուածներու.— Եահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի, հանրային եւ քաղաքական կեանքի ղեկը, կը ստեղծէ օրէնքներ եւ իրաւակարգեր, որոնց միջոցով կիսէ աշխատաւոր մեծամասնութեան ձեռքէն անոր արտադրած բարիքները եւ անոնք նոր զէնք կղարձնէ աւելի եւ աւելի հպատակեցնելու ու կեղեքելու համար նոյն աշխատաւորները :

Աշխատանքի կազմակերպւած շահագործման նախնական եւ ամենակոպիտ ձեւն էր հնադարեան ստրկուքիւնը, — սխտէմ մը՝ որով աշխատաւորներու ահագին բանակներ, զուրկ մարդկային էն տարրական իրաւունքներէ՝ մատնւած էին իրենց տէրերու անսահման քմահաճոյքին :

Ասոր յաջորդեց միջնադարեան փոքրուքիւնը, համեմատարար աւելի մեղմ, բայց աւելի լայն շրջան ընդգրկող սխտէմ մը, ուր աւատականութիւնը — թագաւոր ու զօրավարներ, աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւններ — կազմակերպւած իրրեւ կեղեքիչներու հօօր եւ համատարած բանակ մը՝ կծծէր բազմամիլիօն զիւղացիութեան վաստակը, հրով եւ սրով լռեցնելով անոր ազատադրական ամէն մէկ ձգտումը :

Այդ միջնադարեան հասարակութեան մէջ քիչ մը ազատ շունչ կքաչէին առեւտրական եւ արհեստաւոր դասերը, որոնց ծառայութեանը առանձնապէս պէտք ունէին իշխողները : Ճարտարարեստի եւ հաղորդակցութեան միջոցներու զարգացման հետ՝ բնական տնտեսութիւնը միշտ աւելի ու աւելի կվերածւէր դրամական տնտեսութեան . հնչուն դրամը կղաճնար փոխանակութեան միակ միջոցը, ուժ մը, որուն առջեւ կխոնարհէին պատերազմասէր, արկածախնդիր հրամանատարներ, եւ առեւտրական տարրը, իրրեւ այդ նոր ուժի ներկայացուցիչ, իրրեւ միջնորդ արժէքներու փոխանակութեան, կստանար միշտ աւելի եւ աւելի ծանրակշիռ ազդակի մը նշանակութիւն պետական կեանքին մէջ եւ կվայելէր զանազան առանձնաշնորհներ ու յարաբերական ազատութիւն մը :

Արհեստաւոր տարրերն ալ շնորհիւ իրենց մէջ վաղաժամ առաջ եկած էսնաֆական կազմակերպու-

թիւններուն եւ հաւաքական պայքարներուն, կկարողանային որոշ չափով մեղմացնել իրենց վրա ծանրացած ճնշումները :

Ահա այդ տեսակ, համեմատաբար նպաստաւոր պայմաններու մէջ աճելով, հասարակութեան երկու դասերը առաջ բերին, ժամանակի ընթացքին, այն պատմական հռչակաւոր երրորդ դասակարգը, բուրժուազին, որուն վիճակած էր, գիտակից ուժերու աջակցութեամբ, ահազին յեղաշրջում մը յառաջ բերել ընկերային—հասարակական յարաբերութիւններուն մէջ :

Հասնելով վարգացման որոշ աստիճանի մը, ան բմբոստացաւ աւատական կարգերուն դէմ եւ սկսաւ կազմակերպուած երկարատեւ կռիւ մը : Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ ան իր ետեւէն քաշեց նաեւ աշխատաւորներու դանգաճները : Աւատական եւ յարակից կարգերը չդիմացան անոնց միացած գրոհին եւ խորտակեցան : Այդ կարգերու մընացորդները, այլեւայլ համեմատութեամբ, յարատեւեցին միայն յետամնաց երկիրներու մէջ :

Աւատականութեան կապանքներէն ազատելով՝ բուրժուազին նոր դարադլուխ մը բացաւ, համաշխարհային բնաշրջումին (evolution) մէջ, հսկայական թոխք մը տուաւ մարդկային աշխատանքին, ճարտարարեւստին եւ առեւտուրին :

Այս ամէնը բուրժուազիին պատմական դերին դրական կողմն է : Սակայն, խորտակելով աւատական իրաւակարգը՝ նոյն բուրժուազին հաստատեց իր սեփական իշխանութիւնը : Կեղեքումի մէնաշնորհը վայրենի բիրտ ուժէն անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին—դրամազլխիմ (capital) :

Մեծ յեղափոխութեան հռչակաւոր նշանաբանները—ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրու-

թիւն, որոնց համար աշխատաւորը չէր զլացեր թափել իր արիւնը, մնացին իրրեւ սլատրանք անոր համար, իսկ բուրժուազիի ձեռքը՝ իրրեւ միջոց զբաւած դիրքը ամբապնդելու :

Այլապէս չէր ալ կրնար ըլլալ, ցարչափ անձեռնմխելի կմնար մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է ընկերային անհաւասարութեան :

* * *

Քանի՛ յառաջդիմէ արհեստը, քանի՛ զարգանայ մեքենական խոշոր արդիւնագործութիւնը, այնքան աւելի կուժովնայ եւ կծաւալի բուրժուազիի տիրապետութիւնը : Մանր արտադրիչները անկարող ըլլալով մրցումի դիմանալ, հետզհետէ կզրկւին իրենց աշխատութեան միջոցներէն եւ կխտացնեն օրականով բանող ընչազուրկներու (proletaire) շարքերը : Արդիւնագործութիւնը կկեդրոնանայ : Դրամագլուխը, հարսութիւնները կամբարւին շահագործող փոքրամասնութեան ձեռքին մէջ, որ կոթնելով իր նիւթական ուժին եւ ձեռքն առած քաղաքական ղեկը—յառաջադէմ երկիրներու մէջ—կձգտի յաւերժանցել իր դիրքը, յարմարցնել ամբողջ ընկերային կազմը իր դասակարգային շահերուն եւ դնել իր յատուկ դրոշմը ընկերային բոլոր երևոյթներուն վրա :

Ռազմոյթի (militarisme) կանգուն, մշտական զօրաբանակներու միջոցով՝ ան կապահովէ ներքը իր տիրապետութիւնը, իսկ դուրսը՝ կը դրաւէ շուկաներ, իր սպրանքները արտածելու համար : Շատ անգամ արհեստական կերպով ան ուժ կուտայ ռազմոյթին՝ ազատ դրամագլուխներու դործածութեան նոր ասպարէզներ բանալու նպատակով :

Շահագործելով ազգի, կրօնի ու պետութեան

գաղափարները, ան միևնույն ատեն կը կանգնի միջազգային դետնի վրա և կը շահագործէ նաև միջազգային յարաբերութիւնները :

Արևեստի հսկայական կատարելագործումները, ըստ երևոյթին, պիտի թեթևցնէին աշխատաւոր մարդուն բեռը և քիչ աշխատանքի հետ համեմատաբար աւելի մեծ բաժին յատկացնէին անոր, բայց անոնք հակառակ հետևանքներ առաջ բերին, չնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստէմին : Աշխատանքի մէկ կարևոր մասը կը մնայ անվճար. բաշխումի վայրկենին աշխատաւորը կ'ստանայ իր արտադրած արժէքներուն չնչին մասը միայն :

Մեքենաներու ներմուծման հետ հետզհետէ քիչցաւ աշխատաւոր ձեռքերու խնդրանքը, որոնք վաճառքի նիւթ դարձած են շուկայի ապրանքի պէս : Աշխատաւորին գործօն մասնակցութեան բաժինը՝ արդիւնագործութեան մէջ՝ միշտ աւելի և աւելի կրճատեցաւ :

Կեդրոնացնելով արդիւնագործութիւնը, ընչազուրկ դարձնելով մանր արտադրիչները, դրամոյթը (capitalisme) քայքայման մատնեց աշխատաւորներու ընտանիքները, գործարան մղեց կիները և նոյնիսկ մանուկները, պարադայ մը որ չէր կրնար չը նպատել օրավարձի նւազման :

Անսանձ շահագործումներէ ու հարստահարութիւններէ զատ, նոյն աշխատաւոր ընդհանրութեան վզին կը ծանրանան իրենց աւերիչ ժանտութեամբ՝ հարկերը, մաքսերը, մենավաճառները, ըմպելիքի տուրքերը և յարաճուն ռազմոյթի պատուհասը, որուն էական նպատակն է ամբապէս կռել ստրկութեան շղթաները աշխատաւոր ժողովուրդներուն :

Ոչ նւազ պիտաբեր եղաւ դրամոյթը աշխատաւոր դասակարգին համար՝ իր ներքին ճակատադը-

րական հակասութիւններով :

Շնորհիւ մասնաւոր տնտեսութեան սխտէմին և գործարանատէրերու տենդոտ մրցակցութեան՝ դրամատիրական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարակշռութիւն պահպանել մատուցումին եւ խնդրանքին միջև (offre et demande) . ատկէ առաջ կուզայ արդիւնագործական անխիստանութիւն, որուն էական յատկանիշերն են՝ պարբերական տաղնապներ, միահամուռ անգործութիւն, սնանկութիւններ, գոյութեան ընդհանուր անապահովութիւն եւն. : Կ'ստեղծւի վիճակներու ցայտուն հակապատկեր մը . մէկ կողմէ աշխատաւոր զանգւածներու մերկ, կէսանօթի գոյութիւն, միւս կողմէ դիզած առասպելական հարստութիւններ, որոնց մէջ կը լողայ առանձնաշնորհեալ փոքրամասնութիւնը, և որոնք սակայն նոյն այդ աշխատաւորներու ստեղծագործութիւններն են : Այսպէսով բուրժուական հասարակութեան մէջ ծայրայեղ թշուառութիւնն առաջ կուզայ ծայրայեղ առատութենէն իսկ :

Իրամազլխի կեդրոնացումը և անոր հետ կապւած աշխատաւոր խաւերուն ընչազուրկ դառնալը տարբեր երկիրներու մէջ տարբեր ուժով և տարբեր չափով կը կատարւին, համաձայն այդ երկիրներու առանձնապատուկ՝ բնական, մշակոյթային (cultural), քաղաքական սլայմաններուն : Այդ վերջիներու շարքին մէջ առաջնակարգ տեղ կը բռնէ հողագործութեան զարգացման ծաւալն ու աստիճանը :

Գիւղական աշխարհին մէջ բնաշրջումը տարբեր բնոյթ ունի : Հոն հողի կեդրոնացում նկատելի չէ : Սակայն դրամատիրութեան ժխտական ներգործութիւնը հոն ալ կ'արտայայտուի գիւղացիական այն տարբերու ճակատազրին վրա, որոնք կ'ապրին իրենց սեփական աշխատանքի արդիւնքով, ըլլան ա-

նոնք գիւղական ընչազուրկ աշխատաւորներ, կամ իրենց կտոր մը հողին վրա աշխատող գիւղացիներ :

Մինչդեռ ճարտարարւեստական աշխարհին մէջ բանւորութիւնը ուղղակի՝ անմիջական կերպով կը շահագործւի դրամատէրերու կողմէ, գիւղին մէջ՝ ապրանքներու փոխանակութեան շրջանին տեղի ունեցող անուղղակի շահագործումէն զատ, մենք կը տեսնենք նաև ուղղակի շահագործում հողատէրերու և գիւղական դրամատէրերու կողմէ կապալի, օրավարձի և փոխառութեան ձևով :

Այս ամենուն շնորհիւ դասակարգային հակամարտութիւնն առաջ կուգայ նաև գիւղին մէջ, ուր մէկ կողմը կանգնած է ձրիակեր շահագործողներու դասակարգը՝ հողատէրն ու բուրժուան, իսկ միւս կողմը՝ իր քրտինքով ապրող աշխատաւոր գիւղացիութիւնը :

Սրելով այդ երկու դասակարգերուն յարաբերութիւնները, դրամատիրական կարգերը անուղղակի կձանրանան ուրեմն նաև աշխատաւոր գիւղացիութեան լայն խաւերուն վրա, — ծանրակշիռ հանգամանք մանաւանդ այն երկիրներուն մէջ, ուր գիւղացիութիւնը կը կազմէ ազգարնակութեան գերակշիռ տարրը :

Այդպէսով ոչ միայն արդիւնազործական ընչազուրկ աշխատաւորութիւնը, այլ և աշխատաւոր գիւղացիութիւնը երթալով անհաշտելի ներհակութեան մը մէջ կըբռնին տիրող բուրժուա դրամատիրական կարգերուն դէմ :

Երկու աշխարհներու մէջ տարբեր բնոյթ ունի նաև դրամատիրութեան շինարար գերը : Ճարտարարւեստի աշխարհին մէջ դրամատիրութիւնը՝ համայնացնելով աշխատանքը, տալով բոլոր գործաւնութիւնները վարձու աշխատաւորներու ձեռքը, հե-

ուսցնելով դրամատէրերը արդիւնագործութեան մէջ
գործօն մասնակցութենէ, նպաստելով ընչազուրկնե-
րու ինքնաճանաչութեան աճման ու կազմակերպ-
ման՝ ատով իսկ կնխատապատրաստէ ապագայ ընկեր-
վար հասարակութեան նիւթական եւ հողերանական
խարխիսները եւ կհարթէ անոնց իրագործումի ճամ-
բան :

Այսպէսով, ճարտարարւեստական շրջանին մէջ,
աշխատանքը համայնացած ըլլալով արդէն, ընկեր-
վարութեան իրագործումը կը պահանջէ միայն ար-
դիւնագործութեան միջոցներուն համայնացումը,
մինչդեռ գիւղական աշխարհին մէջ, ուր չի նկատուի
հողերու կեդրոնացում՝ ընկերվարութեան իրագոր-
ծումին համար անհրաժեշտ է համայնացնել թէ՛ ար-
դիւնարեութեան միջոցները—հող, մեքենաներ ևն .
—և թէ՛ աշխատանքը՝ գործակցական (cooperatif)
ձեւնարկներու միջոցով :

Հասարակութեան ընդհանուր բնաշրջումին այդ
ընթացքը առաջ բերելով մրցում անհատ շահագոր-
ծողներուն միջև, մրցում տարրեր երկիրներու շա-
հագործող դասակարգերուն միջև, պայքար դրա-
մատէրերուն և աշխատաւորներուն միջև, պայքար
չատ անգամ նոյնիսկ աշխատաւորական խումբերու
միջև, պատճառ կը դառնայ մարդկային այնչափ կո-
րովի սպարդիւն վատնումին : Մարդկութեան մէկ
մասին բաժին ընելով մաշող աշխատանքը, միւսին՝
պարսպ և զւարճամոլ կեանքը, թողնելով որ մին
քայքայի թշուառութենէն, իսկ միւսը ապասերի հա-
րըստութենէն, ան կը հանդիսանայ հզօր խոչնդոտ
մը մարդկային յառաջդիմութեան գործին :

Դրամատիրութեան սնանկութիւնը ակներե է .
մշակութային յառաջդիմութեան դրօշակը իրապէս

անցած է արդէն աշխատաւոր դասակարգերուն ձեռքը, որոնք դրամատիրութեան կը հակադրեն ընկերվարութիւնը :

Ընկերվարութեան վարդապետութեամբ առաջնորդելով, աշխատաւոր դասակարգերը կը ձգտին վերցնել դրամատիրական մասնաւոր սեփականութիւնը և անոր հետ կապւած անիշխանական արդիւնազործութեան սխտէմը, հասարակութեան ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի՝ արդիւնազործութեան միջոցները—հողը, հանքերը, դործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները և այլն—բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել հաւաքաբար (collectivement) :

Այդ հսկայական յեղաշրջումը կը կատարւի յօդուտ ոչ միայն աշխատաւորներու, այլ և բովանդակ մարդկութեան: Բայց որովհետև ան կը հակասէ ունեւոր, իշխող դասակարգերու անմիջական շահերուն, աշխատաւոր ընդհանրութեան ազատազրուամբ կարող է իրապէս կատարւիլ նոյն աշխատաւորներու ճիգերով, անոնց հաւաքական պայքարով: Այդ պայքարին մէջ կը միանան և ձեռք ձեռքի կուտան՝ քաղաքներու արդիւնաբերական ընչազուրկները—աշխատաւոր դիւզացիութիւնը և յեղափոխական մտաւորականները :

Ինչպէս յաճախ դիտուած է պատմութեան ընթացքին մէջ, այսօր ալ էն յառաջադէմ հոսանքին՝ ընկերվարութեան կողմը կ'անցնին—երբեմն նոյնիսկ իշխող դասակարգերէն—առաւելապէս զիտակից տարրերը, մտաւոր և բարոյական հեղինակութիւնները, որոնք ուժեղ աջակիցը կը հանդիսանան աշխատաւոր ժողովրդեան դատին, անոր վարած պայքարին :

Այդ կռիւը մղւած է ամբողջ պատմութեան ընթացքին մէջ. հարստահարւած աշխատաւորութիւնը ըմբոստացած է յաճախ տիրող ուժի մին դէմ, բայց անկազմակերպ, տարտամ վիճակի մէջ, առանց նպատակի պարզ գիտակցութեան և առաջնորդելով ուրիշ տարրերէ ու ծառայելով գլխաւորապէս անոնց շահերուն: Միայն այն ատեն, երբ աշխատաւոր դասակարգերը իրենց արիւնով նւաճեցին քաղաքական և քաղաքացիական քիչ թէ շատ ընդարձակ իրաւունքներ, երբ անոնք ձեռք բերին հնարաւորութիւնը՝ որոշ չափով օգտւելու քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքէն—այն ատեն միայն անոնք սկսան իրենց սեփական քաղաքականութիւնն ունենալ. անոնց ձգտումները, որոնք մինչև այն ատեն անկերպարան էին, արտայայտւեցան դասակարգային շահերու ներհակութեան աւելի և աւելի յստակ գիտակցութեամբ անոնց ըմբոստացումները՝ որոնք մինչև այն ատեն տարերային ու բաժնւած էին՝ վերածւեցան կազմակերպւած ու սիստէմաթիք պայքարի, աշխատաւորական ուրոյն նշանաբաններով:

Ընկերվարական շարժումը իր էութեամբ միջազգային է: Բոլոր երկիրներու աշխատաւոր տարրերը, իրրև միեւնոյն տնտեսական սիստէմի զոհեր, պէտք է միանան և արդէն կը միանան համաշխարհային հզօր եղբայրակցութեան մը մէջ, ու գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրա, կղիմեն կազմակերպւած պայքարի ճամբով դէպի նոր, ընկերվարական կարգերը:

Աշխատաւոր ընդհանրութեան կազմակերպւող և յարաճուն ուժին՝ բուրժուազին կհակադրէ իր յատուկ քաղաքականութիւնը, որ կտարբերի միջա-

վայրի պայմաններուն համեմատ: Այն երկիրներուն մէջ, ուր ինքը գերիշխող է, ուր իր ձեռքն է քաղաքական գեղը, ինքը բացարձակ կռիւ կմղէ աշխատատարական բանակին դէմ, միացնելով իրեն հետ բեկորները աւատական իշխանութեան, որու դէմ կը հանէր ատեն մը նոյն աշխատատար զանգւածները: Իսկ այն երկիրներուն մէջ, ուր աշխատատարները ըսթափած են դրամատիրութեան ղեռ մատաղ հասակին մէջ եւ սկսած են իրենց կռիւը միաժամանակ շահագործումի բոլոր ձեւերուն դէմ, բուրժուակին ըլլալով թշնամի թէ՛ միապետական ուժիմին եւ թէ՛ աշխատատարական շարժումին՝ մերթ կխրախուսէ աշխատատար բանակը միապետութեան դէմ, որու գոյութեամբ կաշկանդւած կտեսնէ իր զարգացումը, մերթ ալ թեւ կուտայ նոյն միապետութեան, երբ աշխատատարներուն յաջողութիւնները կսպառնան խախտել իր հիմնական դիրքերը:

Դասակարգային պայքարը կրարդանայ մասնաւորապէս այն երկիրներուն մէջ, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ ընկերային բոլոր հաստատութիւնները, կճնչեն թոյլ ազգերը եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւնները:

Զրկելով ընկերային եւ պետական կեանքի գործօն մասնակցութեան հնարաւորութենէն, տուժելով թէ նիւթապէս եւ թէ մշակութապէս, այդ թոյլ միութիւնները ետ կմնան յառաջդիմութեան ճամբուն վրա, եւ այդպէսով կղանդաղի համամարդկային զարգացման հետ աշխատատարին ընկերվարական ազատագրումը, քանի որ այդպիսով խոչընդոտ կը դրւի, մէկ կողմէն՝ դասակարգային հակամարտութեան զարգացումին՝ ճնշւած ազգութիւններու մէջ միւս կողմէն՝ ճնշող ու ճնշող ազգերուն պատկա-

նող աշխատաւոր դասակարգերուն համերաշխութեանը :

Փոքրիկ, նւաճւած մշակութային միութիւններու մէջ աշխատաւոր տարրերը պայքարելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիի դէմ, միեւնոյն ատեն նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային մշակոյթին (culture), որ ստեղծած է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն մը :

Ազգային ճնշումներու դէմ մղւող պայքարը աւելի յամառ ու յազթանակող կղաւնայ, շնորհիւ այն հանդամանքին, որ հիմա այդ մշակոյթի ներկայացուցիչները միայն ազգին «վերին» խաւերը չեն. ազգային մշակոյթը կթափանցէ ժողովրդական լայն զանգւածներու մէջ եւ կղաւնայ անոնց սեփականութիւնը եւ անոնց յառաջդիմութեան միջոցը : Ժողովրդական զանգւածները իրենց անշարժ դրութենէն նետուելով դիտակից կեանքի ասպարէզը, երեւան կհանեն թաքուն ուժեր՝ մշակութային—ընկերային աշխարհին մէջ :

Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խտրութիւնները ազգերու միջեւ, ճրգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաւնակ, ամբողջական մարդկութիւն մը, այսօրւան կտորկտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհին տեղ,— ընկերվարութեան իրագործումը չի պահանջեր արդի ուրոյն ազգայնական միութիւններուն իսպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը :

* * *

Աշխատաւոր դասակարգերու պայքարը յանուն

ընկերվարութեան առաջ կտարւի ըոլոր հնարաւոր միջոցներով—տնտեսական եւ քաղաքական գետնի վրա: Օգտւելով խոշոր տնտեսութեան ներկայացուցած առաւելութիւններէն, գործարանի բանւորները կձգտին կազմակերպւիլ, առաջ տանիլ տնտեսութեան ըոլոր բարձր գործառնութիւնները միմիայն իրենց ուժերով եւ իրազորձել տակաւին ներկայ կարգերուն մէջ—գործակցութիւններու, արդիւնաբերող եւ սպառող ընկերութիւններու միջոցով—համայնական սեփատիրութեան ու տնտեսութեան քանի մը ձեւերը:

Գործակցական աշխատանքը կտարածւի նաև գիւղական աշխարհին մէջ, ուր միեւնոյն ատեն կկատարելագործւին՝ արդէն շատոնց գոյութիւն ունեցող համայնական սեփատիրութեան ու աշխատանքի տեսակները: Գործակցութիւնները ոչ միայն միջոց են որոշ չափով ազահոյելու աշխատաւորներու աւօրեայ շահերը, այլև ճամբայ մը՝ գործնականապէս համայնական ոգիով դաստիարակելու աշխատաւորները, պատրաստելու անոնք ապագայ ընկերվար կազմակերպութեան համար:

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմէ անդադար պայքար կմղեն քաղաքական գետնի վրա, քանի որ տիրող անհաւասարութիւնը կպահպանի գլխաւորապէս բուրժուազիի քաղաքական գերիշխանութեամբ:

Օգտւելով անցեալի փորձերէն եւ իրենց յարաճուն ազդեցութենէն, անոնք կպատրաստին ձեռք ձրգել քաղաքական ղեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց ընկերվարական իդէալին իրադործման համար—ուսմկավարացնել ամենալայն համեմատութեամբ քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական-ուսմ-

Handwritten signature

կալար հանրապետութիւններու, ապակեղրոնացման էն ընդարձակ հիմերու վրա եւ իրազործել արտասեփումի (expropriation) միջոցով ընկերվարական կարգերը :

Ընկերվարութիւնը կհաւաքէ իր դրօշին տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կուելու համար միջազգայնօրէն կազմակերպւած շահագործումի ու բըռնակալութեան դէմ :

Ան կհարթէ ճամբան անհատին եւ ընկերային միութիւններուն դէպի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը. հրապարակ կհանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք սահւած կմանան այլեւայլ ձեւերով արտայայտուող ճնշումներու տակ :

Ան կխորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք կչերտաւորեն ժամանակակից հասարակութիւնը, բաժնելով ան հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերու :

Ան վերջ կդնէ շահագործման բոլոր յայտնի ու դիմակաւոր ձեւերուն. կմիացնէ բոլոր ժողովուրդները հոյակապ Դաշնակցութեան մը մէջ, խաղաղ աշխատակցութեան գետնի վրա. կառաջնորդէ դէպի իսկական թագաւորութիւնը «ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան» :

Ու բոլոր տանջւածներու եւ հալածւածներու այդ իդէալը չի ներկայանար մեզ իբրեւ անգետին, անխարիսի ցնորք մը, այլ իրազործելի հնարաւորութիւն մը, որովհետեւ ան կբղխի ոչ միայն իրերու առարկայական, տարերային ընթացքէն, այլ կթելադրուի հրամայարար՝ պատմութիւնը առաջ շարժող զանգւածներու եւ անհատներու կամքէն, խղճէն ու բանականութենէն :

Պատմութեան առարկայական եւ ենթակայական ստեղծագործող ուժերու դաշնադրութեան մէջ է դը-

րաւականը այն անտարակուսելի յաղթանակին, որը
պիտի տանի աշխատաւոր մարդկութիւնը թէ բնու-
թեան կոյր ուժերուն եւ թէ հասարակութեան մէջ
դարերով թաղաւորող ստրկութեան եւ անարդարու-
թեան դէմ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ն. Յ. Դաշնակցութիւնը, իբրև յեղափոխական
և Ընկերավարական կուսակցութիւն, կձգտի պաշտ-
պանել հայ աշխատաւոր զանգւածներուն բովանդակ
չահերը, թէ՛ տնտեսական-դասակարգային, թէ՛
մարդկային քաղաքական և թէ՛ ազգային-մշակու-
թային, նպատակ ունենալով ժողովուրդին ձեռքը
տալ կառավարութեան ղեկը և արդի միապետական
ու դրամատիրական կարգերը փոխարինել լայն ռամ-
կավարութեամբ և արդիւնարեքութեան միջոցներու
համայնացումով :

Ղեկավար ունենալով Ընկերավարական սկզբունք-
ները, ձգտելով մեր նպատակին ոչ թէ քաղաքական
անջատման ճամբով, այլ պետական կարգերու
վերակազմութեամբ, դաշնակցական հիմերու վրա
և նկատի ունենալով մեր բնական վայրերու իրա-
կան ու հասունցած պէտքերը՝ կուսակցութիւնը կա-
ռաջարկէ հետեւեալ պահանջները .

ԹԻԻՐՔԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

1) Թիւրքա-Հայաստանը կկազմէ Օսմանեան

Սահմանադրական Պետութեան անբաժան մասը,
հիմնւած տեղական լայն ինքնավարութեան վրա:

Օսմանեան կեդրոնական կառավարութիւնը, հիմնւած ժողովրդական ռաւկավար ներկայացուցչութեան սիստէմի վրա, կվարէ պետութեան ընդհանուր գործերը—արտաքին ֆազաւականութիւն, զօրք, դրամ, մաքս, քաղաքատարութիւն եւ հեռագիր—պետական միւս գործերը ձգելով տեղական ինքնավար երջաններուն:

2) Թիւրքա-Հայաստանը, Թիւրքիոյ միւս շրջաններուն պէս, իբրեւ օսմանեան Դաշնակցական պետութեան մէկ մասը, ազատութիւն կվայելէ իր ներքին գործերուն մէջ: Անոր բոլոր շրջաններն ու համայնքները ներքին խնդիրներու մէջ նոյնպէս կը վայելին տեղական ինքնավարութիւն:

3) Թիւրքա-Հայաստանի թէ կեդրոնական եւ թէ առանձին շրջաններու օրէնսդրական-վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրւին ընդհանուր, հաւասար, ուղղակի, զազտնի եւ համեմատական ըրէւէարկութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան:

75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

4) Անդրկովկասեան ռաւկավար հանրապետութիւնը կկազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապւած անոր հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստէմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով:

5) Ներքին բոլոր գործերուն մէջ Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կեդրոնական երեսփ. ժողովը, ընտրւած՝ ընդհանուր, հաւասար,

75

ուղղակի, գաղտնի եւ համեմատական քւէարկութեան դրութեամբ: Իւրաքանչիւր անդրկողկասցի, եր անցուցած է 20 տարին, առանց սեռի խտրութեան իրաւունք ունի ընտրելու:

6) Անդրկողկասը Ռուսաստանի համապետական Երեսփ. Ժողովին կղրկէ իր ներկայացուցիչները՝ ընտրւած քւէարկութեան նոյն դրութեամբ:

7) Անդրկողկասեան հանրապետութիւնը կրաժնրւի նահանգներու (canton), որոնք կվայելեն տեղական ամենալայն ինքնավարութիւն: Համայնքները նոյնպէս կվայելեն ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներու մէջ:

8) Նահանգներու սահմանները որոշած ատեն՝ պէտք է նկատի առնել ազգարնակութեան տեղագրրական եւ մշակութային մասնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար:

9) Օրէնսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպէս եւ պաշտօնեաները կընտրւին ժողովրդեան կողմէ, վերել յիշւած ընտրական դրութեամբ:

10) Ուղղակի օրէնսդրութիւն, համաժողովրդական քւէարկութեան (referendum) եւ նախաձեռնութեան իրաւունք:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

11) Կատարեալ ազատութիւն խօսքի, մամուլի, խղճի, միութիւններու եւ դործազուլներու:

12) Եկեղեցիի բաժանումը պետութենէն: Կրօնքը անհատական խղճի գործ է:

13) Ազգերու ինքնորոշման իրաւունք, կատար-

եալ հաւասարութիւն բոլոր ազգերու ու կրօնական համայնքներու: Ոչնչացում դասակարգային բոլոր առանձնաշնորհումներուն:

14) Անբռնարարութիւն անձի, բնակարանի, նամակադրութեան:

15) Ազատութիւն տեղափոխութեան: Ստիանում անցազրերու:

16) Ընդհանուր, պարտադիր եւ ձրի սկզբնական ուսում պետական հաշտով: Դպրոցներու աշխարհականացում: Դասաւանդութիւն մայրենի լեզուով:

17) Զրի դատավարութիւն:

18) Մշակութային նպատակներու յատկացւած պետական, նահանգային եւ շրջանային պիւտճէի բաժանում առանձին ազգութիւններու միջեւ, համաձայն ազգաբնակչութեան քանակին, անոր դործադրութիւնը, ինչպէս եւ իւրաքանչիւր ժողովրդի մշակութային դործերու ղեկավարումը յանձնելով ընտրւած ուրոյն մարմիններու:

19) Համայնական եւ նահանգային բոլոր պաշտօնեաներու համար պարտաւորիչ է տեղական երկու դիւաւոր լեզուներու հմտութիւնը. իսկ ընդհանուր պաշտօնեաներու համար՝ երեք դիւաւոր լեզուներունը: Պետական լեզուն պարտաւորիչ է:

20) Քաղաքագորք՝ միլիս՝ մշտական զօրքի փոխարէն: Իւրաքանչիւր առողջ քաղաքացի պարտաւոր է որոշ ժամանակով պաշտօնավարել, իրրեւ քաղաքագորք: Քաղաքագորքը կպաշտօնավարէ իր շրջանի սահմաններուն մէջ: Ան կենթարկւի ընդհանուր զօրահաւաքի՝ միայն այն պարագային, երբ վտանգ մը կսպառնայ բովանդակ պետութեան ազատութեանն ու ամբողջութեանը:

Ամէն քաղաքագորք՝ միլիսին, իր ծառայութեան ընթացքին մէջ, հոռզ (քուսկ) կստանայ

աշխատանքական նւագագոյն օրավարձի չափով :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 1) Հողերու համայնացում :
- 2) Հողը կղաղբի մասնաւոր սեփականութիւն եւ վաճառքի նիւթ ըլլալէ :
- 3) Արքունի, կալւածատիրական, կրօնական հիմնարկութիւններուն պատկանող, ինչպէս եւ բոլոր այլ տեսակի հողերը դարձնել ժողովրդի սեփականութիւն :
- 4) Հողէն օգտուելու իրաւունքը կպատկանի աշխատաւորներու, — աշխատաւորական սկզբունքով — իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բաւարարութիւն տալ իր եւ իր ընտանիքի սպառողական պահանջներուն :
- 5) Հողի տնօրինութիւնը եւ անկէ օգտուելու ձեւերուն մանրամասն որոշումը կպատկանի դիւղական եւ քաղաքային համայնքներուն :
- 6) Կեդրոնական եւ շրջանային վարչութիւններ

րուն կվերապահւի իրաւունքը՝ պարբերական հողա-
բաժանումներու միջոցով՝ իրագործել հողերու միջ-
շրջանային եւ միջհամայնական հաւասարեցումը :

7) Համայնքէն ընտրւած մարմիններու կարգա-
դրութեան կյանձնելին համայնական ընդհանուր կա-
րելորութիւն ունեցող գետինները (անտառ, արօտ)
ու ջրերը (չարժոյժ, ձկնորսութիւն) եւ ատոնցմէ
ստացւող հասոյթները կգործածւին համայնքի մը-
շակութային ձեռնարկներու համար :

8) Հանքերը, ինչպէս նաեւ արտաքոյ կարգի ար-
ժէք ունեցող բնական ուրիշ հարստութիւնները կհա-
մարւին պետական սեփականութիւն, եւ անոնց հա-
սոյթները կգործածւին ընդհանուր ժողովրդական—
մշակութային նպատակներու համար :

9) Խափանում անուղղակի հարկերու (պերճան-
քի առարկաներէ զատ) :

10) Յառաջատուական (progressif) տուրք եկա-
մուտի եւ ժառանգութեան : Հարկէն բոլորովին ա-
զատել որոշ չափէ մը պակաս հասոյթ ունեցողները :

11) Ոչնչացում հովանաւորիչ մաքսի :

12) Պետական ամենամատչելի վարկ (credit) :

Անմիջական խափանում օլամի, բէզարի եւ
նման չվարձատրւող աշխատանքներու :

13) Պետական ազահովազրութիւն, երաշտի,
կարկուտի, մարախի, հեղեղի եւ ուրիշ նման պա-
տահարներու դէմ :

14) Համայնական կազմակերպում այն բոլոր
ձեռնարկներուն՝ ինչպէս ճամբաներ, լուսաւորու-
թիւն, փուռ, սպանդանոց, հիւրանոց եւայլն, ո-
րոնց շահագործումը ժողովրդական նշանակութիւն
ունի :

15) Ձարդացում սպառողական, արդիւնաբերական եւ դործակցական ուրիշ բնոյթ ունեցող ձեռնարկներու :

16) Օրական 8 ժամուան աշխատանք բանւորներու համար, թէ քաղաքներու եւ թէ գիւղերու մէջ : Առողջապահական տեսակէտով առանձնապէս վտանգաւոր ու վնասակար դործերու մէջ՝ աւելի պակաս :

17) Մահմանում նւազագոյն օրավարձի քաղաքներու եւ գիւղերու մէջ :

18) Աշխատանքի օրէնսդրական հովանաւորում գիտական, առողջապահիկ պահանջներու համեմատ : Խափանում գիշերային աշխատանքի (բացառութեամբ այն աշխատանքներուն, որոնց արւեստական բնոյթը ընդմիջում չի ներեր) :

19) Խափանել կիներու եւ մանուկներու գիշերային աշխատանքը : Կիները ազատ պէտք է ըլլան տշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ առաջ եւ վեց շաբաթ ետքը : Արգիլել մանուկներու աշխատանքը մինչեւ 15 տարու, իսկ 15-էն 18 սահմանափակել օրական 6 ժամով : Վերցնել պայմանաժամէ դուրս աշխատանքը : Արգիլել տուգանքի ձեւին տակ օրավարձի նւազեցումը :

20) Կիրականօրեայ լիակատար հանգիստ : Մահմէտականներու համար՝ ուրբաթ օրը :

21) Գործարանական վերատեսչութեան ընտրութիւնը՝ բանւորներու կողմէ : Բանւորներու մասնակցութիւն դործարաններու ներքին վարչական գործերուն :

22) Բանւորներու ապահովագրում դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան եւ անդործութեան հանդէպ, պետութեան եւ դործատէրերու հաշուով :

23) *Զրի դարձանում : Արհեստային (technique)*
ճրի աջակցութիւն :

24) *Աշխատանքի սակարաններ :*

Գաւակցութեան իւրաքանչիւր գործելավայրի
(Թիւրքիա, Կովկաս, Պարսկաստան) ռաջօնական
ժողովները կմտակեն *պլատֆորմ* իրենց ընթացիկ եւ
անմիջական պահանջներու համար :



